

Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիւնիկ», Ի
Աղեփսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍՍՆԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԵՆԻԿ Է

Ձեռագիր եւ չհար-
ձուիր

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎ. 6
Ազդեր կ'ընդուն-
ուին մասնաւոր
պայմաններով.

ՓԻԻՆԻԿ

Կը ծախուի Մէն գրուե ողջի

ՇԱՐԱՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

22 ՆՈՅԵՄԲԵՐ 1902

ԹԻԻ 20

ՀԱՅԵՐԸ ԱՐԵՒԵԼՔԻՆ ՄԷՉ

Այս վերնագիրը կը կրէ այն աղ-
տոտ յօդուածը, զոր Գահիրէի էջ Ան-
րամ արարաթերթը հրատարակեց Հոկ-
տեմբեր 31ին, 4786րդ թիւին մէջ:

Ահաւասիկ թարգմանութիւնը.

«Անցեալի մէջ հայերը շատ մ'ա-
ռանձնաւորուածներ ու շատերն ալ
բարձր պատկանեցին ստացան Օսմ. կա-
ռավարութեան, բաղդ շինեցին, սէր
եղան դիրքի ու վիճակի. Ամեն ժողո-
վուրդ կ'ունենայ իր խոստովայոյց մար-
դիկը, լոկ ծնած՝ չարին համար. Ազ-
գի մը սկարացման կամ փնացման
պատճառները բնեւորով՝ նոյն ազգին
զաւակներուն անմիաբանութեան մէջ
կը գտնենք զանոնք:

Հայ ազգին սեւ բաղդէն իր մէջ
ալ երեսան եկան կարգ մ'անհանդարս
մարդեր, բոլորովին զգէս, վաս ու
նախանձոն. Վեց տարի կայ, կազմուե-
ցաւ իրենցմէ կուսակցութիւն մը կա-
ռավարութեան դէմ ու բարեկարգում

խնդրելու պատճառով հպատակները
զրգոելով ասելութիւն ցանց մէջեր-
նին. Բայց այս բարեկարգումները
խնդրելու եղանակը կ'որոշուի ո՛չ թէ
այն ազգին զգէսներուն շարժումովը,
այլ անոր բանիմաց անդամներուն գոր-
ծունեութեամբը. Ասոնցմէ մաս մը
զարդուեցաւ, մաս մ'ալ ձերբակալուե-
ցաւ ու բանտարկուեցաւ. Այն մասը,
զոր կարելի չ'եղաւ ձերբակալել, փա-
խաւ, առանց մտնելու թէ ի՛նչ բաղդի
հանդիպեցան քանի՛ քանի հայ ընտ-
նիկներ, որոնք այն ասեմ ա՛յնչափ վը-
նասուեցան: Կիներ այրիացան ու զա-
ւակներ որք մնացին.

Այս իրականութիւնը դեռ բարձ է
մեր յիշողութեան մէջ:

Այդ ասեմները շատ մը հայեր հոս
զաղթեցին, եկրին ամեն կողմերը
ցրուեցան. Գահիրէ ու Աղեփսանդրիա
խոսեց նորեկներուն բազմութիւնը. ա-
սոնց ընտանիքները ծածկեցին հայոց՝
եկեղեցիին բակերը: Երջանկայիշուսակ
Մուհամմէտ Ալի բաւային օրերէն ի
վեր եզրապսոս հաստատուող իրենց եղ-
բայրները պատուով հիւրընկալեցին

(*) Եթէ Յօդուածագիրը հայ է, ինչո՞ւ
ծախի մը բերնով կը խօսի: Մ. Խ.

գիրենք, ամեն հանգսութիւն վայելել
 սալով իրենց ու ո՛չ մի բանի կարօտ
 քաշել չը սալով: Երբ խառնակութիւն-
 ները հանգարեցան ու խունայ սագ-
 նապին մուրը փարատեցաւ, բարձրա-
 գոյն հրամանով մ'արտօնուեցաւ իրենց
 երկիրը վերադառնալ: Բայց ասոնք
 խռովայոյզներէն էին, անցեալներ ու-
 նէին, խառնակիչներ էին. խիստ պա-
 սիժի վախէն չը համակերպեցան իրենց
 ընկերաց հետ հայրենիք վերադառնա-
 լու, լաւաւոյն համարելով հաստա-
 սուիլ եգիպտական երկնքին սակ, ուր ո՛չ
 կոխ կայ ո՛չ հսկողութիւն*, մասնա-
 տօրապէս բեռ ըլլալով իրենց եղբայր-
 ներուն վրայ: Այդ խռովայոյզներուն
 խելքը միտքը չարութիւն էր. ի ծնէ
 չար իրենք ու խռովասէր, հաճոյք մը
 կ'զգան ցանելու ժողովուրդին մէջ
 չարութիւն ու խռովութիւն: Ասոնք մըս-
 քերին դրին տեղական ազգ. ժողովին
 ընտրութեանց մասնակցիչ, դրդուած՝
 անձնական դիտումներէ ու շահամո-
 լութենէ. ու անկիայ բաւ չը համա-
 րելով՝ որոշեցին վերջերս կրօնային
 խնդիրներու ալ միջամտել, յարձակիլ
 կողերին վրայ, ապստամբիլ թեմին ե-
 պիսկոպոսին դէմ, որուն իրաւասու-
 րութիւնը բացարձակ է կրօնական խըն-
 դիրներու մէջ: Պէտք է յիշել այն խառ-
 նակութիւնը, որ տեղի ունեցաւ Ադեմ-
 սանդրիոյ եկեղեցիին սարկաւազ մը
 քահանայ ձեռնադրելու ժամանակ: Երբ
 Առաջնորդը, սկսաւ ձեռնադրութեան
 արարողութիւնը, շարք տրեկոյ հոկտ. 18ին,
 սարկաւազին բարի վարքը վկա-
 յութիւններով հաստատելէ ետք, այդ
 խռովարարները, ըստ սովորութեան,
 ուզեցին արգիլել Նորին Սրբազնու-
 րիւնն ի գործ դնելէ հարկաւոր արա-
 րողութիւնները, որոնք կը կատարուին
 ձեռնադրութենէն քանի մ'օր առաջ:
 Նախասինքներ եղան ու մեծ իրարան-
 ցում եկեղեցիին, յարձակումներ դասին
 վրայ: Ոստիկանութիւնը պարտաւորե-

(*) Անխառնութիւն կը տիրէ հոս. Ծ. Խ.

ցաւ միջամտել ձեռնադրելու խառ-
 նակիչները: Լուրը հասաւ կառավար-
 չին որ անձամբ փութաց դէպքին վայ-
 րը. թէեւ բիրտ ուժի դիմելով միայն
 կրցաւ ձեռնադրել ու դուրս հանել
 սալ զանոնք: Դէպքը հաղորդեց առ որ
 անկ է:

Ասանկ վստահաւոր արարներու
 վրայ կը հրաւիրենք կառավարութեան
 ուշադրութիւնը, որ արգիլէ ամեն ոսն-
 ձրգութիւն կրօնական արարողութեանց
 դէմ, համաձայն կայսերական հրովար-
 տակներուն. նաեւ կը յուսանք թէ անի
 պիտի հսկէ ամեն խռովարարի վրայ,
 չը խանգարելու համար հանրային
 կարգն ու անդորրութիւնը:

Գահիրէի Երեւելի Եգիպտահայ մը»*

Այս քա՛ն ապուշ, այս քա՛ն տըխ-
 մար ալ գրող՝ Փարաւոնի աւագները
 միայն կրնային արտագրել. Նեղոսի
 տիղմերուն մէջ սնած աճած կոկորդի-
 լոսը, որ իր աւանդական արցունքովը
 կ'աշխարհէ, կուլայ կողբայ մեր հայ-
 բենիքի որբերն ու այրիները...:

Տխուր իրականութիւն մը սակայն
 էջ Ահրաւի շուքը պահուած այդ-
 յօդուածագրին կեղծ ու շինծու փո-
 խառութիւնը հանգամանքին ու ազ-
 գանուան: Չպիտի կրնամ երբէք հա-
 մոզուիլ թէ՛ հայ մը, ի՛նչ խմոր ալ
 ունենայ, ի՛նչ դասակարգի ալ պատ-
 կանի, ոսկերիչ ըլլայ թէ՛ դրան պաշ-
 տօնեայ. հայ մը ի՛նչ մականուանով որ
 ըլլայ, նոյնիսկ Թորոսեան — հայ մը
 կ'ըսեմ, հին թէ՛ նոր, բնիկ թէ՛ գաղ-
 թական, յետագիւմական թէ՛ յառաջ-
 դիմական, պահպանողական թէ՛ ազա-
 տական. նոյն իսկ հայ մը, որ իր մէջ
 խեղդած ըլլայ ցեղին ձայնը. որուն
 երակներուն մէջ ա՛լ չը չըջան ընեք
 հայկական արիւնը. վերջապէս հայ մը,
 որ գէթ չը կրնար ուրանալ իր ծա-
 գումը, ծնունդը, կրօնը, լեզուն, պատ-
 մութիւնն ու անցեալը. հայ մը, որուն

(*) Ինչո՞վ երեւելի. Ծ. Խ.

յիշողութեան մէջ դեռ թարմ են ներկային սարսափները, նորէն կը կրկնեմ, չը պիտի կրնամ երբէք համոզուիլ թէ՛ հայ մը մինչև այդ աստիճանները ցածնալու ատակ ըլլայ, միմիայն նախատելու համար իր եղբայրները, այն ալ ազգին ու կրօնքին պատիւը պաշտպանելու պատրուակին տակ:

Ըսէք կաղաչեմ, եթէ դաւաճանութիւն չէ այս, ի՞նչ է.

Իսկ թէ ո՞վ է այդ նոր վասակը, հարցումին պատասխանը թո՛ղ հաճի տալ մեր անկեալ Սորազան Այվազեանը, որուն առաջնորդական պէրաքին — ռամկական իմաստովը կամ էջ Ահրամի ըմբռնումովը — գործադրութիւնը պահանջած է այդ գահիրէի երեւելի եգիպտահայը, կայս. հրովարտակաց համաձայն (°°°):

Բնական է թէ հայ մասուլը պիտի լռութեամբ չ'անցնէր այս յայտնի հրէշային դաւաճանութեան վրայէն, որուն բուն նպատակն է խախտել եգիպտական կառավարութեան վստահութիւնն ու համարումը, զոր մինչև ցարդ կը շարունակէ ունենալ դէպ ի հայերս և ստեղծել հակառակութեան հոսանք մը մեզի դէմ:

Թո՛ղ փորձեն, նայինք. թող սրեն իրենց խայթոցները, բայց լա՛ւ գիտնան թէ՛ այդ խռովայոյզ խառնակիչ կարծեցեալ Հայերը պիտի ըլլան վերանորոգիչները, որոնք արարներու զպտիններու մէջ ձուլուելէ պիտի ազատեն հին եգիպտահայութեան բեկորները, ռամիկներն ալ տոհմիկներն ալ:

Մեր յարգելի պաշտօնակից էջ Ահրամ ի — որ այդ յօդուածը հիւրընկալած է — սա միայն կը հարցընենք թէ խռովայոյզնե՞ր էին իր հայրերը կամ մեծ հայրերը, որոնք 40 տարի առաջ քանի մը տասնեակ հազարներով, Իսմակոսի Մեծ-Չարդէն փախչելով հոս թափեցան և ազատեցին իրենց թոյլ

մորթը...: Թող ներէ նաև յիշեցընել իրեն թէ՛ Հայ եկեղեցին չը նմանիր, իր սկզբունքներուն, կանոններուն ու սովորութեանը, նոյնիսկ ծէսերուն մէջ ալ, կաթոլիկ եկեղեցիին: Հայ եկեղեցին՝ սկիզբէն առաքելական, միշտ մնացած է ազատական եկեղեցի մը, ժողովուրդովն ու ժողովուրդին համար. հետևաբար Այվազեանի մը ձեռքը անցած պէրաքովը չէ որ այդ եկեղեցին պիտի փոխէր իր դարաւոր սկզբունքները. այդ պէրաքը թող ամուր բունէ պահէ, թերևս մօտերս անցագրի տեղ անցնի այն, երբ այդ զառամած մարդուն ցոյց տրուի վերջապէս ծովին ճամբան, դէպ ի Պոլիս (*):

ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒ ՄԱԿԵՂՈՆԻԱ

Լ'Էօրօքէէն միջազգային շաբաթաթերթին 1 նոյեմբերի թիւին մէջ հրատարակուած «Արեւելեան գործոց համար եւրոպական Դեսպանախորհուրդի մը պէտքը» վերնագրով ու Անադոյ Լըռուա Պոլիէօ ստորագրութեամբ շահեկան յօդուածէն թարգմանաբար քաղուած մը կ'արժէ տալ «Փիւնիկ»ի ընթերցողներուն:

Պալքաններուն գրգռումն ու թուրք կայսրութեան ներքին խառնակութիւններն այնքան ծանրակշիռ հանգամանք մ'առած են որ ա՛լ չ'են կրնար տակաւին տեւել, առանց ամբողջ Եւրոպան գահավիժելու ընդհանուր պատերազմի մը մէջ, որուն ո՛չ

(*) Դեպ ի Պոլիս վերնագրով 5 տարի առաջ շիջալոյս Փարոսի մէջ երեւցած աղտոտ յօդուածի մ' ու ասոր միջև տարբերութիւն մը դժուար է գտնել. անոր մէջ Հայերը ծոյլ էին, իսկ ասոր մէջ իրենց բնիկ եղբայրներուն վրայ բռն... որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ: Ծ. և.

տարածութիւնը կարելի է գուշակել
և ո՛չ ելքը:

Եթէ Հայաստանի ու Մակեդոնիոյ
մէջ շարունակուող խժդժանքի ու բնա-
ջնջումի տեսարանները չ'են կրնար
յուզել մեր եսականութիւնը, գոնէ
Եւրոպայի պետական մարդոց խոհե-
մութիւնն ու քաղաքագէտներուն չըր-
ջահայեցութիւնը չը պիտի կրնային
անզգայ մնալ այդ երկիրներուն ապրս-
տամբական յարաճուն շարժումին ու
խոնումներուն:

Սուլթանը սարսափով կ'ուզէ կար-
գը վերահաստատել, կառավարելու
իր միակ գործիք ընդունելով թա-
լանը, բռնաբարումն ու ջարդը, ինչ-
պէս Եւրոպայի նոյնպէս Ասիոյ մէջ,
ինչպէս Վարտարի ու Սգբուժայի հո-
վիտներուն մէջ, նոյնպէս Վանայ լը-
ճին եզերքին ու Վերին Եփրատայ սեպ
գետափանց վրայ: Մակեդոնիոյ քրիս-
տոնեայք, Սլաւներն իսկ, բնաջնջումի
վտանգին ենթարկուած, ա՛լ ընդվը-
զեցան ու լեռները քաշուեցան, կրթը-
նելով Իշխանապետութեան իրենց
պուլկար եղբայրներուն ու ստուարա-
ցընելու համար լեռը քաշուած ամրա-
ցած միւս հրոսախմբերը:

Չմեռը մօտեցած թո՛ղ չըլլար,
ընդհանուր ապստամբութիւնը պիտի
պայթէր: 1876ի Պօսնիա-Հէրձէկովինի
կացութեան նման և անկէ աւելի յոռի
է հիմակուանը, քանի որ Սուլթանին
հոն կուտակած գումարտակները կ'ա-
ւերեն նահանգն ու իրենց խժդժանք-
ներով յուսահատութեան կը մղեն
խեղճ քրիստոնեաները:

Եթէ Եւրոպական դիւանագիտու-
թիւնը առաջքը չ'առնէ, Մակեդոնիան
ճիշդ Պօսնիոյ ըրածը պիտի ընէ: Ա-
պրստամբութիւնը գարնան պիտի տա-
րածուի հոն: Պուլկարիան — ինչպէս
որ ըրին Սերպիան ու Սև լեռը Պօս-
նիոյ համար — ուզէ չ'ուզէ բացէ ի
բաց պիտի բռնէ Մակեդոնիոյ քրիս-

տոնէից կողմը. Սերպիան պիտի չ'ուզէ
Պուլկարիայէն ետ մնալ: Իսկ Ռուսիան,
մոռնալով Աւստրիոյ հետ իր կնքած
դաշինքն ու Շայրագոյն-Արևելքի մէջ
իր մտահոգութիւնները, պիտի չը կըր-
նայ անտարբեր դիտել ընդհարումներն
ու իր ուղղափառ եղբայրներուն ջախ-
ջախումը: Ըսե՛ղ է թէ՛ անհեռատես դի-
ւանագիտութեան մը, կամ աւելի
ճիշդը, կառավարութեանց անտարբե-
րութեան ու ցածութեան երեսէն Եւ-
րոպան պիտի գլտորի նոր Արևելեան
պատերազմի մը մէջ, որ ի վերջոյ
թերևս վերածուի ընդհանուր պատե-
րազմի մը:

Ա՛լ կասկած չը կայ, թուրքիոյ
մէջ կրակը կը միայ, վաղը յանկարծ
կը բռնկի. նշոյլները կը տեսնուին ար-
դէն Մակեդոնիոյ, Հին Սերպիոյ, Ալ-
պանիոյ ու Հայաստանի մէջ: Եւրոպան
կուզէ՞ որ իր հանգիստը չը վրդովի,
թո՛ղ ակամօջ կախէ անոնց լաց ու
կոծին:

Դիւանագիտական միջամտութիւն
մը պէ՛տք է, միջամտութիւն մ'ար-
գիւնաւոր ու ազդու, որ մի միայն
կ'ըլլայ եթէ ո՛չ Գոնկրէ մը, գոնէ
Դեսպանախորհուրդ մը գումարելով:

Իրաւ է որ Տէրութիւնները կրնան
դիմումներ ընել Դրան կամ նոյն իսկ
Եոլտըզի, բայց այս վերջիններուն սու-
տերը քանի՛ քանի անգամներ բռնուե-
ցան, գիտենք. ա՛յս է արդէն մէկ ա-
պացոյցը լուութեան, զոր Եւրոպան կը
պահէ հանդէպ ա՛յնքան բարբարոսու-
թեանց, որոնք կ'անպատուեն այս դա-
րասկիզբը:

Հաւաքական գոծողութեան մը
համար Պետլինի դաշնագիրը ստորա-
գրողներու միջև համաձայնութիւն մը
պէտք է, որ կ'ըլլայ, նորէն կ'ըսենք,
Եւրոպական դեսպան սխորհուրդով մը:

Պետլինի դաշնագրին էական մա-
սերէն շատերը մեռած տառ կը մնան
դեռ. ահա՛ շարժառիթը դեսպանա-

խորհուրդ մը կազմելու, զանոնք վերջնապէս գործադրել տալու համար: Ու շատ գիւրին է ասի. ո՛չ խաղաղութիւնը, ո՛չ ալ կառավարութիւնները կը վրդովէ. վէճի դուռ ալ չը բանար ընդհակառակն, Թուրքիան իսկ, միւսլիման ու քրիստոնեայ, առհասարակ գոհ կ'ըլլան, իրենց ապահովութիւնը գտնելով:

Թրքական գանձին համար ո՞րքան լաւ է ասի. պահանջատէր եւրոպացիներուն փափագածը չէ՞ տեական խաղաղութիւն մը կայսրութեան մէջ:

Ինչպէս ըսինք, Դեսպանախորհուրդը պիտի լուծէ Պեւլինի դաշնագրին ոչ-գործադրութեամբ առկախ մնայած բոլոր խնդիրները. ինչո՞վ անոնց գործադրութեամբ անշուշտ:

Այսպէս, գլխաւորապէս, Հայոց Հարցը, ՅԱՐԳ յօդուածով, ազատելու համար Ասիոյ ազգերուն ամենէն աւելի եւրոպականին արիւնոտ մնացորդները, ու ասիկայ կ'իրագործուի, ստիպելով Սուլթանը, որ տէրութեանց յանձնէ իր հայ հպատակաց ապահովութիւնն այսուհետեւ երաշխաւորող միջոցներուն գործադրութիւնը:

Նոյնպէս ալ Մակեդոնիոյ ու եւրոպական միւս նահանգներուն համար, որոնք ի Պեւլին ուղղակի Սուլթանին տիրապետութեանը տակ գրուեցան:

Արևելեան Ռումէլիին ու Կրետէի անորոշ ու տարտամ կացութեան ալ կարելի է փափագուած վերջ մը դնել, եթէ գեռ ատենը չէ՛ Կրետէն կցելու իր Մայր-Հողին:

Իսկ եթէ Դեսպանախորհուրդը ջանայ վերջ մը դնել Ռումանիոյ հրէից աննախանձելի կացութեանը, դարձեալ Պեւլինի դաշնագրին ուժովն ու ոգիովը, Եւրոպան փայլուն ապացոյց մը տուած պիտի ըլլայ թէ ինք կը ներշնչուի լոկ մարդկութեան ու քաղաքակրթութեան շահերէն:

Իրաւ, հարցերը բարդ են ու զանազան, բայց տէրութիւնները կրնան վերջապէս համաձայնութեան մը գալ, քանի որ բովանդակ եւրոպային — թէ՛ երրեակ նիզակակցութեան և թէ՛ երկեակինը — միակ նպատակն է խաղաղութեան պահպանումը:

Խնդիրը կը մնայ գիտնալ թէ ո՞ր տէրութիւնը կամ ո՞ր նիզակակցութիւնը պիտի համաբաժակի նախաձեռնարկն ունենալ:

Փրանսայի՛ կը վայելէ, ըստ մեզ, այս պատիւը, զի իր անցեալին արժանի ու իր աւանդութեանց ամենալաւին համաձայն դեր մը կատարած կ'ըլլայ. ու եթէ, հետեւող մ'ալ չ'ունենայ, գոնէ Արևելքի ազգերուն աչքին ու աշխարհի առջև պիտի բարձրանայ իր պատիւը:

Զրկուած ազգերուն բարեկամները պիտի պաշտպանեն արդարութեան ու մարդկայնութեան այս սուրբ գատը: Մեծաթիւ են, բարեբաղդաբար, ու կառավարական քաղաքականութեանը կողմնակիցներուն մէջ ամենէ՛ն ազդեցիկներն են անոնք. եւ անտարակոյս պիտի ունենան նեցուկը բոլոր մարդոց որոնք կուսակցութեան կամ կրօնային դաւանանքի խտիր չը դնելով, կը հաւատան թէ՛ Փրանսան գեռ ունի պաշտօն մը Արևելքի մէջ: Աւա՛ղ, պէ՛տք ալ ունինք մենք արարքի մը, որ մեզ վերականգնէ մե՛ր իսկ ու միւս ազգերուն աչքին տուէ:

Թո՛ղ չ'ըսուի թէ վտանգաւոր *solif hozoթութիւն* մ'ըրած պիտի ըլլանք. պզտիկ մնալու վտանգ չը կայ երբէք:

Դեսպանախորհուրդը միայն կ'ընծայէ միջոցը լուծելու Արևելքի կնճիւնները վանելու վտանգները, որմէ կըսկսին արդէն վրդովիլ եւրոպական դահլիճները: Նօյժոյ՛ Վրէճիս ուս թերթը վերջերս կը գրէր թէ՛ մօտակայ գարնան մեծ ապստամբութեան պայթումն

արգելելու համար Գ.ուը պէտք է
ձմեռէն օգտուի, խաղաղացնելու հա-
մար իր նահանգները, Պեռլինի մէջ
խոստացուած երաշխաւորութիւնները
վերջապէս տալով:

Ռուս թերթը շատ լաւ կը գրէ.
բայց ո՞վ կրնայ վստահիլ Սուլթանին
ա՛յնքան ուշացող բարի կամքին վրայ:
Եւրոպական դիւանագիտութեան մի-
ջամտութիւնը միայն կրնայ զանի ճամ-
բու բերել ստիպումով: Եթէ Ֆրանզ-
եւուս զաշնակցութիւնը դիտնար ինք
ունենալ անոր նախաձեռնութիւնը,
զաշնակցութեան արժէքը պիտի բարձ-
րանար եզակիանօրէն երկու ազգերո՛ւն
ալ առջև, և երկու կառավարութեանց
ու երկու ազգերուն վարկը մեծապէս
պիտի աւելնար քաղաքակրթեալ աշ-
խարհին առջև:

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

(Շար. 19 քիւէն եւ վերջ)

Տրայիզօն. 8 Հոկտ. — (Պուլա-
նըզի գաւառակ) Պօսրաւիէնի գիւղը՝
ձիւրանլի քուրտ պետին, Նասօգասե
Սայիս ին չարագործութեանց թատր
եղաւ: Ստորև նշանակենք իր ոճիրնե-
րուն մէկ քանինները.

Կիւղնագ, Սիւննիկն աղջիկը, առե-
ւանդեցին, բռնաբարեցին ու քուրտի
մը հետ կարգեցին:

Ռաւի, Աքրօին աղջիկը, առեւան-
դեցին, լլկեցին ու յետոյ քուրտի մը
պարգև տուին:

Հերպօ, Կօճօյին կինը, երեք տա-
րի կայ, առեւանդեցին: Վերջերս Սա-
յիտ բռնեց զանի այն պահուն որ կ'աշ-
խատէր փախչիլ ու իր տունը դառնալ:
Սպաննեց զանի. յետոյ, իր վրէժը
կատարեալ ընելու համար, Կօճօյին
աղջիկը յափշտակեց ու Գուրտի մը
տուաւ:

Սայիտ առեւանդեց Մարիամը,

Նազարի աղջիկը: Ասի յաջողեցաւ փախ-
չել ու ապաստանեցաւ Մուշի Առաջ-
նորդարանը: Ուստի Սայիտ նախ սպան-
նեց Նազարը, յետոյ գիւղապետ Կէն-
ճօն. դեռ կ'սպառնար սպանգը շարու-
նակելու, եթէ Մարիամի հարազատ
մայրը նորէն անոր ձեռքը չը յանձնէր
իր մատղաշ աղջիկը:

Երկու օր պաշարելէ ետք, իր
հայրենի տանը մէջ բռնեց Մուրատի
աղջիկը Հերքօ ու զանի առաւ տարաւ:

Հասանանլի պետերը, Սիւլէյման
ու Քիզա, երկուքն ալ Մանազկերտի
համիտիյէ գնդէն սպաներ, օր ցերե-
կով յարձակեցան Իրիզակ հայ գիւղին
վրայ. սպաննեցին Կիկօ Մարտիրոս-
եան երեւելի Հայը, իր ծառան և ուրիշ
երեւելի մը, վիրաւորեցին Խաչօն, տա-
րին 200 գլուխ արջառ ու բոլոր ինչ
որ ինկաւ ձեռքերնին. Արդէն անցած
տարի նոյն գիւղէն վերցուցած էին
180 գլուխ արջառ:

Սիւլէյման ու Քիզա յարձակեցան
նաև Արտոնք գիւղին վրայ ու առին
տարին 90 գլուխ արջառ. ու յետոյ,
բնակիչներէն արջառ գլուխ 1 ոսկի
(22 Ֆր. 75) փրկանք ուղեցին. դրամն
առին, բայց դրամին հետ պահեցին
նաև կենդանիները: Բնակիչները բո-
ղոքի գացին Պուլանըզի գայմագամին,
ասոր վրայ երկու աւազակները թալա-
նի սկսան ու տարին ուրիշ 55 գլուխ
արջառ, առաջուաններն ալ հաշուելով
ընդ ամենը, 30 գոմէշ, 50 եզ, և 65
կով:

Փլիդ քուրտը, Խիզուրլի ցեղա-
խմբէն, լոկ սպաննելու և թալլելու
հաճոյքին համար սպաննեց 2 Հայեր,
ու վիրաւորեց Բերդակ գիւղէն Մելիք
Կոյեանը:

Համիտիյէներն աւարի տուին Ար-
հատ ու Խմելչուր գիւղերը, Կարինէն
Մուշ գացող կարաւանը կոխեցին,
Հայերը զատեցին միւս ճամբորդներէն,
զանոնք ամբողջը կողոպտեցին, մէկը

վերաւորեցին, ուրիշ մ'ալ սպաննեցին:

Պալագլիններուն ցեղախմբէն Շէ-
կօտուն քուրո պետը Սասնոյ թաղա-
վանք գիւղին արջառին մեծ մասը
վերցուց տարաւ ամիս մ'առաջ: Զո-
հերը գանգատեցան իշխանութեանց,
որոնք անմիջապէս Շէկօտունի իմաց
տունին անոնց գանգատները. այս վեր-
ջինը չուտով թաղավանք կը դառնայ,
կ'առնէ կը տանի մնացորդ արջառը,
կ'սպաննէ շատ մը Հայեր. յետոյ կ'եր-
թայ Լօրտէնձոր գիւղն ու կ'այրէ
ձեռուան բոլոր պաշարները:

Վերջապէս, Խոյզ ու Բռնաչէն գա-
ւառակներուն Հայերը թողուցին տուն
տեղերնին, ալ չըկրնալով տանել խրժ-
գըժանքը Գուրտերուն որոնք առե-
ւանգեցին ու լլկեցին շատ մը մանկա-
մարդ աղջիկներ, բռնի իսլամացնելով:

Ու տեղեկագրին հեղինակը կ'ա-
ւելցընէ.

«Ինչո՞ն ու արժանապատուութիւնն եր-
կու աղէկ բաներ են, լոկ թուղթի վրայ,
բայց գործնականին մէջ գրեթէ չ'ենք հան-
դիպէր: Ո՞վ եւրոպա, ձգէ՛ անդգայութիւնդ:
Յիշէ՛ 1878 ին Պեւլէնի մէջ տրուած խօս-
քը: Օգնութեան եկո՛ւ այս թշուառ արա-
բածներուն, որոնք, իրե՛նք ալ իրաւունք
ունին լոյսին, ինչպէս միւս մարդիկները:
Թուրքիոյ մէ՛ջ ալ հաստատենք Մարդկան
Իրաւունքը »:

ՔՐՈՆԻԿ

— Օրմակեան Ս. Պատրիարքի
չնորհաւորած էր Ամեն. Տ. Տ. Սահակ
Խապտեանի կաթողիկոսական ընտրու-
թիւնը, մին՝ Երուսաղէմի Ս. Պատրի-
արքին ու միւսը Նորընտիր Կաթողի-
կոսին ուղղեալ երկու հեռագիրներով:
Այս շաբթուան թղթաբերով հասած
պոլսական հայաթերթերէն կը տեղե-
կանանք թէ՛ Յարութիւն Ս. Պատրի-
արքը պատասխանելով Պսլոյ Ս. Պատ-
րիարքին, աւետած է թէ Նորընտիրը
սիրով կ'ընդունի իր անձին վրայ կա-
յացած ընտրութիւնը:

Այսպէս, Սոյ Ս. Աթոռը — 8

տարիներէ ի վեր թափուր — վերջա-
պէս կ'ունենայ իր գահակալը, որուն
Երուսաղէմէն մեկնելու թուականը
դեռ յայտնի չէ:

ՎԵՐԱԴԱՐՁՔ

— Տիար Յովհաննէս Մուրաճ-
եանց որ ամառնային եղանակն ան-
ցուց Զուխցերիոյ մէջ ու կովկաս, ան-
ցեալ Շարաթ օրը ուսականով
քաղաքս վերադարձաւ իր Ազն. Տիկ-
նոյ հետ:

— ՏԻՍՐ ԱՐՄԵՆԱԿ ԿՍՄՍԱՐԱԿԱՆ,
ամսոյս 19ին, ընտանեօք վերադարձաւ եւ-
րոպայէն, Մեսաժրիի Նիժէ չոգենաւով, որ
անսելի փոթորիկ մը կրած է շարունակ 3 օր:
Մեր ինդակցութիւնները:

— Տիար Կոպեր Պեչեան, նախ-
կին տնօրէն Լաւալ լուսանկարչատան,
վերջերս իր սեփական նկարատունը
հաստատած է քաղքիս Շերիճ քաղա-
քը եղագոյն փողոցին վրայ Տեարց Թօս.
Գուք և Որդի գրասենեակներուն ճիշդ
գիմացը: Արուեստին նրբութիւնը,
յանձնարարութեանց անյապաղ կատա-
րումը, գիներուն չափաւորութիւնը, և
մէն մի երկվեցեակ զայցիկն նկարի
համար 30-40 հարիւրօրդամէդրով սի-
րուն քաւքաւորուով ձրի ակրակսխանակ
մը, ահաւասիկ այս նոր հաստատու-
թեան առաւելութիւնը:

— Գահիրէի Միջնաբերդի ձօսիկ
վառօղանոցին մէջ ամսոյս 18ին կէս օր-
ուան մօտ ահուելի պայթում մը տեղի
ունեցաւ, կը հաւաստուի թէ 23 մար-
դու կորուստ կայ:

— Գահիրէի Միջնաբերդի կամ ժո-
ղովրդ. հասարակար տեղի ունեցաւ ամ-
սոյս 16ին կիրակի, մօտ 300 չերկա-
ներով: Բանախօսներն էին պարոնայք
Հրակն Արաքի, Սուրէն Էքմէֆճեան և
Շաւարշ Շիշմանեան: Միաձայնու-
թեամբ որոշուեցաւ վճարել ազգային
տարբեր, ընտրութեանց մասնակցելու
համար, ապագային թողլով բողոքել
այդ տուրքին կամայական գանձումին
գէ՛մ: Մանրամասնութիւնները յաջոր-
դով:

— ՊՕՂՈ. ԱԶԳ. ԵՐԿ. ՎԱՐԺԱ-
ՐԱՆԻՆ ուսուցչական մարմինը կազմը-
ւած է վերջնականապէս: Պ. Տնօրէնին
տեղեկագիրը, հոգաբարձութեան ուղ-
ղեալ, Թաղ. Խնամակալութեան մա-
տուցուած է առ ի քննութիւն և վա-
ւերացում:

— ԵՐՈՒՍԱՂԷՄԻ մէջ Գօլերային
մօւտքն ու ներկայութիւնը հաստատ-
ուեցան:

ԱԶԳ

«ԱՐԱՔՍ»ի գրաշարներուն հիւան-
դութեանը պատճառով «Փիւնիկ»ը կա-
րելի չեղաւ հրատարակել անցեալ
շաբաթ:

Ահաւասիկ ՏՍՍԸ իւղանկարները
շահող թիւերը, իրենց շահած պար-
գեւներուն կարգովը:

182. 22. 51. 152. 192. 162. 91.
58. 16. 180.

Ստանալու համար դիմել Տիար
Յ. Ղազիկեանի կաթնարանը:

«ԱՐԱՔՍ»

Հայկական տպարանը թէ՛
Հայերէն, թէ՛ գաղղիերէն և
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն
տեսակ տպագրական գործեր
կը կատարէ մեծ խնամով եւ,
ինչ որ նուազ կարեւոր չէ:

ԽԻՍՏ ԶԱՓԱԽՈՐ ԳԻՆԵՐՈՎ,

ՏՐ. ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Ամերիկեան վիսյեսայ թժիշկ

Սեուսրիս փողոց թիւ 1

«Ճար s'Աշեֆսանսր»ի սպարանիկ

վրայի Ա. յարկը

Տօգթէօր Սարգիս Բ. Ժամկոչեան
պատիւ ունի ծանուցանել Տեղիս ար-

գոյ հասարակութեան թէ՛ ինք հաս-
տատուած է վերջնապէս քաղաքիս մէջ
ու պատրաստ է դարմանելու ընդհա-
նուր հիւանդութիւններ: Մասնագի-
տօրէն ու Ամերիկայի կատարելագոր-
ծուած ու նորագոյն բժշկական փոր-
ձերով ու սխաղէմով կը բուժէ մանա-
ւանդ արեան վերաբերեալ զանազան
ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ամեն օր
կէս օրէն ետքը ժամը 2-5: Իսկ Զո-
րեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան
ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ ի-
րեն դիմող աղքատ հիւանդները:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՆԵՐՈՒԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ

ՂՕԶԱՆ. ԶՈՒԻՅԵՐԻՄ

Կրթատունս կ'ընդունի 10 էն 20
տարեկան աշակերտներ, որոնց գիտա-
կան, գրական, արհեստագիտական, ևն,
առողջ ու կատարեալ կրթութիւն մը
կուտայ, ծնողքներու բաղձանքին հա-
մեմատ: Եւրոպական և ասիական լե-
զուներու, գիտութեանց և վաճառա-
կանական ուսմանց մէջ գործնականն իր
կարեւոր տեղը կը բռնէ տեսականին
քով: Զանազան ազգէ դասատուներու
և աշակերտաց ներկայութիւնը լեզու-
ներու ուսումը բարձրովին կը դիւրացնէ:
Իսկ կարեւոր քաղաքներու և գործա-
րաններու այցերը գիտական ուսուց-
ման մեծապէս կը նպաստեն:

Կրթատունս մեծ խնամք կը տանի
նաև բարոյական և ֆիզիքական կրթու-
թեանց:

Հայ ծնողներու համար մասնա-
ւոր պայմաններ:

Մանրամասնութիւններու և պայ-
մաններու համար դիմել առ

I, Longeraie, Lausanne
Suisse

Տնօրէն
Մ. Նալպանտեան
Տոքո. ի Գիտութիւնս
Մասնաւոր-Ուսուցիչ Հա-
մալսարանի